փոքրագոյն» եւ կը գետեղուին հոն[5]: Այս կը պատահի 1611—1612 տարիներուն:

Մեծ Անապատի դիրքի մասին ուշագրաւ են տողերս[6].

«Այժմեան Զանդեղուրի կողմից դէպի Տաթեւ գնացողը, լեռնաշտի լայնութեամբ երկար եւ ձանձրալի ճանապարհորդութիւնից յետոյ հասնելով Շնհեր գիւղի սահմաններին, ապշում է բնութեան այն ահեղ ու վայրենի տեսարաններից, որ նրա առջեւ բաց է անում Որոտնայ գետի հսկայական կիրճը: Զոր ա-նուն տալ այդ խոր ու լայն բացուածքին շատ նուազ արտայայտիչ մի բան կը լինէր: Դա մեծ ու փոքր ձորերի, մեծ եւ փոքր սարերի, շղթաների, պատռուածքների, հսկայական լանջերի, անդունդների, նեղ, կանաչազարդ հովիտների մի բարդ խառնուրդ է, որի մի-ջով իր համար օձապտոյտ ճանապարհ է բա-ցել Որոտնայ գետը: Այդտեղ ահա կանգ առան մեր երկու ճգնաւորները: Որոտնայ գետի աջ դեղանկար ափին, Տաթեւից ցած դէպի հա-րաւ-արեւելք, նրանք տեղ ընտրեցին եւ հիմ-նեցին Մեծ Անապատը»:

Խոստացած էր իրենց Մովսէս վարդա-պետ թէ երբ անոնք Սիւնիք հասնին եւ հոն

---

[5] Լէմիաձնի Թ. 685 Հարանց վարքի գրիչն (յամէ 1632) կը գրէ· «Ցիշեցէք եւ զյիշման արժանին զեր-ջանիկ բարունին եւ զքաջ իմաստասէրն զՍարգիս վար-դապետն զհեղինակ սուրբ ուխտիս մեծի ճգնաւորի սրբոյն Անտոնի անապատականի» (Թղ· 58 ա):

[6] Լէս, Հայկական տպագրութիւն, Բ. տպ., Թիֆ-լիս 1904, էջ 152—153: